

Գլուխ XI

Դասախոսություններից մեկի ժամանակ Գ.-ն ամբողջովին նորովի սկսեց տիեզերքի գծապատկերը գծել:

- Մինչ այժմ մենք խոսել ենք աշխարհները ստեղծող ուժերից՝ արարման գործընթացից, որ սկիզբ է առնում Բացարձակից: Իսկ այժմ կխոսենք այն գործընթացից, որը տեղի է ունենում արդեն ստեղծված և գոյություն ունեցող աշխարհում: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ արարման գործընթացը երբևիցե կանգ չի առնում, չնայած, մոլորակների մակարդակով, աճը այնքան դանդաղ է ընթանում, որ եթե այն դիտարկենք մեր ժամանակի ընկալունակության համաձայն, ապա մոլորակային պայմանները մեզ համար կայուն կթվան:

Եկենք դիտարկենք «արարման ճառագայթը» տիեզերքի արարումից հետո:

Բացարձակի գործողությունը աշխարհի կամ աշխարհների վրա, որոնք ստեղծվել են իր կողմից և իր ներսում, շարունակվում է: Այս աշխարհներից յուրաքանչյուրի գործողությունը հաջորդող աշխարհների նկատմամբ շարունակվում է միևնույն կերպով: Ծիր Կաթնի «Բոլոր մոլորակները» ներագրում են մեր Արեգակի վրա: Արեգակը ներագրում է մոլորակների վրա: «Բոլոր մոլորակները» ներգործում են մեր Երկիր մոլորակի վրա, իսկ Երկիր մոլորակը ներգործում է Լուսնի վրա: Այս ազդեցությունները փոխանցվում են ճառագայթումների միջոցով, որոնք անցնում են աստեղային և միջմոլորակային տարածության միջով:

Ճառագայթումները ուսումնասիրելու համար վերցնենք «արարման ճառագայթը» կրճատված ձևով՝ Բացարձակ-Արեգակ-Երկրագունդ-Լուսին, կամ, այլ կերպ ասած, եկեք «արարման ճառագայթը» պատկերացնենք *ճառագայթման երեք օկտավաների* տեսքով. առաջին օկտավան՝ Բացարձակի և Արեգակի միջև, երկրորդ օկտավան՝ Արեգակի և Երկրագնդի միջև, իսկ երրորդ օկտավան՝ Երկրագնդի և Լուսնի միջև: Իսկ այժմ եկեք ուսումնասիրենք ճառագայթումների անցումը տիեզերքի այս չորս հիմնարար կետերի միջև:

Մենք պետք է այս տիեզերքում գտնենք և հասկանանք մեր գործառույթը՝ դիտարկելով այն *ճառագայթումները երեք օկտավաների* տեսքով, որոնք ընկած են այս չորս կետերի միջև:

Առաջին օկտավայում Բացարձակը իր մեջ ներառում է երկու նոտա՝ «դո» և «սի», որոնց միջև կա «ինտերվալ»:

Ինտերվալ դո ԲԱՅԱՐԸԱԿ

սի

Պատկեր 20

Ապա կհետևեն «յա», «սոլ», «ֆա» նոտաները. այն է՝

Ինտերվալ դո ԲԱՅԱՐԸԱԿ

սի

յա

սոլ

Ֆա

Պատկեր 21

Այնուհետև ինտերվալ և «ցնցում», որը լրացնում է ինտերվալը. դա մեզ համար անհայտ երևույթ է, սակայն անխուսափելիորեն գոյություն ունեցող: Դրան հաջորդում են «մի» և «ոե» նոտաները:

Ինտերվալ դո ԲԱՅԱՐՁԱԿ

սի
յա

սոլ
ֆա

Ինտերվալ -----Առաջին ցնցումը

մի

ոե

Պատկեր 22

Ճառագայթումը հասնում է Արեգակին: Արեգակի մեջ ընդգրկվում են երկու նոտաներ «դո»-ն, «ինտերվալը» և «սի»-ն, որոնց հաջորդում են «յա», «սոլ», «ֆա»-ն՝ դեպի Երկիր մոլորակ ընթացող ճառագայթումները:

Ինտերվալ դո ԲԱՅԱՐՁԱԿ

սի
յա

սոլ
ֆա

Ինտերվալ -----Առաջին ցնցումը

մի

ոե

Ինտերվալ դո Արեգակ

սի

յա
սոլ
ֆա

Պատկեր 23

Այնուհետև «ինտերվալ», որին լրացնում է օրգանական կյանքի «ցնցումը», որին էլ հաջորդում են «մի» և «ոե» նոտաները: Երկրագունդ. «դո», «ինտերվալ», «սի», այնուհետև «յա», «սոլ», «ֆա»՝ դեպի Լուսին գնացող ճառագայթում. այնուհետև կրկին «ինտերվալ», մեզ անհայտ «ցնցում», այնուհետև «մի», «ոե», Լուսին, «դո»:

Ճառագայթումների այս երեք օկտավաները, որոնց միջոցով մենք այժմ կպատկերացնենք տիեզերքը, մեզ թույլ կտան բացատրելու, թե ինչպես են հարաբերվում աշխարհի տարբեր մակարդակներին պատկանող նյութերը, ուժերը մեր սեփական կյանքի հետ:

Պետք է նշել, որ չնայած՝ այս երեք օկտավաներում գոյություն ունեն վեց «ինտերվալներ», իրականում միայն երեքն ունեն արտաքինից լրացման կարիք: «Դոյի» և «սիի» միջև ընկած առաջին «ինտերվալը» պարփակված է Բացարձակի կամքով: Երկրորդ «դոյի» և «սի» միջև ընկած «ինտերվալը» պարփակված է արեգակնային զանգվածի ազդեցությամբ և դրանով անցնող ճառագայթումներով: Իսկ երրորդ «դոյի» և «սիի» միջև ընկած «ինտերվալը» պարփակված է Երկիր մոլորակի զանգվածի գործողությամբ և դրա միջով անցնող ճառագայթումներով: Միայն «ֆայի» և «միի» միջև եղած «ինտերվալներն» է անհրաժեշտ լցնել «լրացուցիչ ցնցումներով»: Այս «լրացուցիչ ցնցումները» կարող են կամ առաջանալ այլ օկտավաներից, որոնք անցնում են տվյալ կետով, կամ զուգահեռ օկտավաներից, որոնք սկիզբ են առնում ավելի բարձր կետերից: Բացարձակ-Արեգակ առաջին օկտավայում «միի» և «ֆայի» միջև տեղի ունեցող «ցնցման» էության մասին մենք որևէ տեղեկություն չունենք: Սակայն Արեգակ-Երկրագունդ օկտավայի «ցնցումը» *Երկրի վրա օրգանական կյանքն է*, այն է՝ օկտավայի «յա, սոլ, ֆա» երեք նոտաները, որոնք սկիզբ են առնում Արեգակից: Երկրագունդ - Լուսին օկտավայի «միի» և «ֆայի» միջև առաջացող «ցնցման» բնույթը մեզ համար մնում է անհայտ:

Անհրաժեշտ է նշել, որ իմ կողմից կիրառվող «տիեզերքի կետ» տերմինը ունի բավականին հստակ նշանակություն. «կետը» իրենից ներկայացնում է ջրածինների որոշակի միացություն, որոնք կազմակերպված են որոշակի վայրում և իրականացնում են որոշակի ֆունկցիաներ այս կամ այն համակարգում: «Կետ» հասկացությունը չի կարելի փոխարինել «ջրածին» հասկացությամբ, քանի որ «ջրածին» նշանակում է նյութ, որը սահմանափակ չէ տարածության մեջ, իսկ կետը տարածության մեջ միշտ սահմանափակ է: Մինևույն ժամանակ «տիեզերքի կետը» կարելի է նշանակել այն «ջրածնի» *թվով*, որը գերակշռում է կամ կենտրոնական դեր է խաղում դրանում:

Եթե մենք այժմ ճառագայթման երեք օկտավաներից մեկը, այսինքն՝ Բացարձակ-Արև օկտավան, ուսումնասիրենք «Երեքի» օրենքի տեսանկյունից, ապա կտեսնենք, որ «դո» նոտան կլինի ակտիվ ուժի ուղղորդողը, որը նշանակվում է թիվ 1-ով, մինչդեռ այն նյութը որում դրսևորվում է այս ուժը կլինի «ածխածինը» (C): Բացարձակում «ակտիվ» ուժի կողմից ստեղծված «դո» նոտան ունի տատանումների մաքսիմում հաճախականություն կամ ամենամեծ խտություն:

«Տատանումների խտություն» արտահայտությունը համապատասխանում է «տատանումների հաճախականությանը» և օգտագործվում է «մատերիայի խտություն» արտահայտությանը հակառակ, այսինքն՝ որքան մեծ է «մատերիայի խտությունը», այնքան փոքր է «տատանումների խտությունը» և ընդհակառակը՝ որքան մեծ է «տատանումների հաճախականությունը», այնքան փոքր է «մատերիայի» խտությունը: «Տատանումների ամենամեծ խտությունը» կարելի է գտնել ամենանուրբ և ամենանոսր մատերիայում: Ամենախիտ նյութերում հնարավոր տատանումները դանդաղում են և գրեթե կանգ առնում: Հետևաբար ամենանուրբ մատերիայում «տատանումները ամենախիտ» ձևով են դրսևորվում: Ակտիվ ուժը Բացարձակում ներկայացնում է «տատանումների մաքսիմում խտությունը», մինչդեռ այն մատերիան, որում առկա են տվյալ տատանումները, այն է՝ առաջին «ածխածինը» ունի նյութի մինիմում խտություն:

«Մի» նոտան Բացարձակում կլինի պասիվ ուժի ուղղորդողը, որը նշանակվում է թիվ 2-ով: Այն մատերիան, որում դրսևորվում է այս պասիվ ուժը և որում կհնչի «սի» նոտան, «թթվածինն է» (O):

«Լյա» նոտան կլինի չեզոքացնող ուժի ուղղորդողը, որը նշանակվում է թիվ 3-ով, իսկ այն մատերիան, որում կհնչի տվյալ նոտան, «ազոտն» (N):

Ըստ իրենց գործողության՝ ուժերի հերթականությունը հետևյալն է. 1, 2, 3, որոնք համապատասխանում են «ածխածին», «թթվածին», «ազոտ» նյութերին: Սակայն ըստ նյութի խտության նրանք կպահպանեն հետևյալ հաջորդականությունը. «ածխածին», «ազոտ», «թթվածին», այն է՝ 1, 3, 2, որովհետև «ազոտը» համապատասխանելով թիվ 3-ին և լինելով չեզոք ուժի առաջնորդը՝ իր նյութի խտությամբ գտնվում է «ածխածնի» և «թթվածնի» միջև, իսկ «թթվածինը» այդ երեքից ամենախիտն է:

«Ածխածինը», «թթվածինը», «ազոտը» միասին վերցված չորրորդ կարգի մի նոր նյութ են կազմում «ջրածին» (H), որի խտությունը մենք կնշանակենք թիվ 6-ով (որպես 1, 2, 3-ի ընդհանուր գումարը), այն է՝ H6:

Առաջին եռյակը դո C 1 1 1
 սի O 2 3 2 H6
 յա N 3 2 3

C, O, N պահպանում են իրենց թվերը՝ 1, 2, 3: «Ածխածինը» միշտ 1 է, «թթվածինը» միշտ 2 է, իսկ «ազոտը» միշտ 3 է: Սակայն լինելով առավել ակտիվ քան «թթվածինը»՝ «ազոտը» որպես ակտիվ սկզբունք հաջորդ եռյակ, մուտք է գործում 2-ի խտությամբ: Այլ կերպ ասած՝ «ազոտը» ունի 2-ի խտություն, իսկ «թթվածինը»՝ 3-ի խտություն:

Այսպիսով, առաջին եռյակի «յա» նոտան ակտիվ ուժի ուղղորդողն է հաջորդ եռյակում, ուր նա մուտք է գործում 2-ի խտությամբ: Եթե «ածխածինը» մուտք է գործում 2-ի խտությամբ, ապա «թթվածինը» և «ազոտը» պետք է համապատասխանեն իրենց խտությամբ՝ համամասնորեն կրկնելով առաջին եռյակի խտությունը: Առաջին եռյակի մեջ խտությունների համամասնությունը 1, 2, 3 էր: Երկրորդ եռյակում այն պետք է լինի 2, 4, 6, այն է՝ երկրորդ եռյակի «ածխածինը» կունենա 2-ի խտությունը, «ազոտը»՝ 4-ի խտությունը, «թթվածինը»՝ 6-ի խտությունը: Միասին նրանք կկազմեն «ջրածին» 12 (H12):

Երկրորդ եռյակը յա C 2 2 2
 սոլ O 4 6 4 H12
 ֆա N 6 4 6

Միևնույն գծագրին և հաջորդականությանը համաձայն՝ կկազմավորվի հետևյալ եռյակը. «ֆա», «ցնցում», «մի»: «Ածխածինը», որը երկրորդ եռյակում «ազոտ» էր, մուտք է գործում 4-ի խտությամբ: Համապատասխանաբար՝ «ազոտը» և «թթվածինը» պետք ունենան խտություն 8 և 12: Միասին նրանք կկազմեն «ջրածին» 24 (H24):

Երրորդ եռյակ ֆա C 4 4 4
 - O 8 12 8 H24
 մի N 12 8 12

Հետևող «մի», «ոե», «դո» եռյակը, միևնույն գծագրին և հաջորդականությանը համաձայն՝ կկազմեն «ջրածին» 48 (H48):

Չորրորդ եռյակ մի C 8 8 8
 ոե O 16 24 16 H48
 դո N 24 16 24

«Դն», «սի», «լյա» եռյակը կկազմի «ջրածին» 96 (H96):

<i>Հինգերորդ եռյակը</i>	դն	C	16	16	16	
	սի	O	32	48	32	H96
	լյա	N	48	32	48	

«Լյա», «սոլ», «ֆա» եռյակը՝ «ջրածին» 192 (H192):

<i>Վեցերորդ եռյակ</i>	լյա	C	32	32	32	
	սոլ	O	64	96	64	H192
	ֆա	N	96	64	96	

«Ֆա», «ցնցում», «մի»՝ «ջրածին» 384 (H384):

<i>Յոթերորդ եռյակ</i>	ֆա	C	64	64	64	
	–	O	128	192	128	H 384
	մի	N	192	128	192	

«Մի», «ռե», «դո»՝ «ջրածին» 768 (H768):

<i>Ութերորդ եռյակը</i>	մի	C	128	128	128	
	ռե	O	256	384	256	H768
	դո	N	384	256	384	

«Դն», «սի», «լյա»՝ «ջրածին» 1536 (H1536):

<i>Իներորդ եռյակ</i>	դն	C	256	256	256	
	սի	O	512	768	512	H1536
	լյա	N	768	512	768	

«Լյա», «սոլ», «ֆա»՝ «ջրածին» 3072 (H3072):

<i>Տասներորդ եռյակը</i>	լյա	C	512	512	512	
	սոլ	O	1024	1536	1024	H3072
	ֆա	N	1536	1024	1536	

«Ֆա», «ցնցում», «մի»՝ «ջրածին» 6144 (H6144):

<i>Տասնմեկերորդ եռյակ</i>	ֆա	C	1024	1024	1024	
	–	O	2048	3072	2048	H6144
	մի	N	192	128	192	

«Մի», «ռե», «դո»՝ «ջրածին» 12288 (H12288):

<i>Տասներկուերորդ եռյակը</i>	մի	C	2048	2048	2048	
	ռե	O	4096	6144	4096	H12288

Այս տասներկու «ջրածինները» ձեռք են բերվում 6-12288 խտություններով (Տես աղյուսակ 1):

Տասներկու ջրածինները ներկայացնում են տիեզերքում առկա նյութի տասներկու կատեգորիաներ՝ սկսած Բացարձակից մինչև Լուսինը, և եթե հնարավոր լինել որոշել, թե այս նյութեղենից կոնկրետ որ մեկն է կազմում մարդու օրգանիզմը և գործում դրանում, ապա հենց միայն սրանով կարելի կլիներ սահմանել մարդու գրաված տեղը այս աշխարհում:

Այնտեղ, որտեղ մենք ենք տեղակայված՝ մեր սովորական ունակությունների և կարողությունների սահմաններում, «ջրածին 6» անտարրալուծելի է. հետևաբար մենք կդիտարկենք այն որպես «ջրածին» 1, հաջորդ «ջրածին» 12-ը, որպես «ջրածին» 6: Բոլոր հաջորդող ջրածինները կրճատելով 2-ով՝ մենք ձեռք կբերենք «ջրածին» 1-ից մինչև «ջրածին» 6144 մի սանդղակ: (Տես աղյուսակ 2-ը):

Սակայն «ջրածին» 6-ը դեռևս անտարրալուծելի է մեզ համար: Հետևաբար, մենք կարող ենք դիտարկել այն որպես «ջրածին» 1, իսկ դրան հաջորդող «ջրածինը»՝ որպես «ջրածին» 6 և 2-ով կրճատելով բոլոր հաջորդող «ջրածինները»:

Աղյուսակ 2

Աղյուսակ 3

Այս կերպ ձեռք բերված 1-ից մինչև 3072 սանդղակը կարող է ծառայել մեզ մարդուն ուսումնասիրության գործում:

Բոլոր նյութերը, որոնք կարելի է գտնել «ջրածին» 6-ից մինչև «ջրածին» 3072, կարելի է գտնել մարդու օրգանիզմում, որոնց դերը շատ մեծ է: Այս «ջրածիններից» յուրաքանչյուրը պարունակում է մեզ հայտնի քիմիական նյութեր, որոնք միմյանց կապակցված են՝ մեր օրգանիզմում որոշակի ֆունկցիա կատարելու նպատակով: Այլ կերպ ասած՝ չպետք է մոռանալ, որ «ջրածին» տերմինը շատ լայնիմաստ է: Ցանկացած պարզ տարր որոշակի խտություն ունեցող «ջրածին» է, սակայն «ջրածինների» տարրերի ցանկացած միացություն, որն ունի որոշակի ֆունկցիա, թե աշխարհում, թե մարդկային օրգանիզմում, նույնպես «ջրածին» է:

Նյութերի նման սահմանումը մեզ թույլ է տալիս դասակարգել դրանք ըստ նրա, թե ինչպես են վերջիններս հարաբերվում կյանքի և մեր օրգանիզմի ֆունկցիաների հետ:

Եկեք սկսենք «ջրածին» 768-ից: Այս «ջրածինը» սահմանելի է որպես *կերակուր*, այլ կերպ ասած՝ «ջրածին» 768-ը պարունակում է այն բոլոր նյութերը, որոնք կարող են մարդու համար «կերակուր» հանդիսանալ: Այն նյութերը, որոնք որպես «կերակուր» չեն կարող ծառայել, ինչպես օրինակ՝ փայտի կտորը, պատկանում են «ջրածին» 1536-ին, իսկ երկաթի կտորը՝ «ջրածին» 3072-ին: Մյուս կողմից, քիչ սննդաբար հատկություններ պարունակող «բարակ» նյութը ավելի մոտ կլինի «ջրածին» 384-ին:

«Ջրածին» 384 սահմանելի է՝ որպես *ջուր*:

«Ջրածին» 192 մթնոլորտի այն օդն է, որով մենք շնչում ենք:

«Ջրածին» 96-ը այն նոսրացած գազերն են, որ մարդը չի կարող շնչել, սակայն, որոնք շատ կարևոր դեր են խաղում նրա կյանքում: Դեռ ավելին՝ սա կենդանական մագնիսականության նյութն է, մարդու մարմնից «N ճառագայթների», հորմոնների, վիտամինների և այլնի ճառագայթումը: Այլ կերպ ասած՝ «ջրածին» 96-ով ավարտվում է այն ինչ մեր ֆիզիկայի կամ քիմիայի կողմից կոչվում է նյութ: «Ջրածին» 96-ը նաև պարունակում է նյութեր, որոնք գրեթե անըմբռնելի են մեր քիմիայի համար, կամ

ըմբռնելի սուկ իրենց հետքերի կամ արդյունքների միջոցով, որոնք ենթադրվում են որոշ գիտնականների կողմից և ժխտվում՝ մյուսների:

«Ջրածին» 48, 24, 12 և 6-ը նյութեր են, որոնք հայտնի չեն մեր ֆիզիկային և քիմիային. դրանք մեկ այլ մակարդակի պատկանող, մեր հոգեկան ու հոգևոր կյանքին պատկանող նյութերն են:

«Ջրածինների» ամբողջական աղյուսակն ուսումնասիրելիս անհրաժեշտ է միշտ հիշել, որ այս աղյուսակի յուրաքանչյուր «ջրածին» պարունակում է տարբեր նյութերի հսկայական քանակություն, որոնք մեր օրգանիզմում միմյանց հետ կապվում են միևնույն ֆունկցիայով և իրենից ներկայացնում են որոշակի «տիեզերական խումբ»:

«Ջրածին» 12-ը համապատասխանում է քիմիայի «ջրածնին» (ատոմային կշիռ 1): «Ածխածինը», «ազոտը» և «թթվածինը» (քիմիայում) կազմում են ատոմային ծանրություն 12, 14, 16-ը:

Դեռ ավելին՝ ատոմային ծանրության աղյուսակում հնարավոր է առանձնացնել այն տարրերը, որ համապատասխանում են որոշակի «ջրածիններին», տարրեր, որոնց ատոմային ծանրությունը մեկը մյուսի նկատմամբ գրեթե ճիշտ այն հարաբերության մեջ է գտնվում, ինչպես օկտավայում: Այսպիսով, «ջրածին» 24-ը համապատասխանում է ֆտորին (F -ատոմային կշիռ 19): «Ջրածին» 46-ը համապատասխանում է քլորին (Cl -ատոմային կշիռ 35.5): «Ջրածին» 96 համապատասխանում է բրոմին (Br -ատոմային կշիռ 80): «Ջրածին» 192 համապատասխանում է յոդին (I- ատոմային կշիռ 127): Այս տարրերի ատոմային կշիռը մեկը մյուսի նկատմամբ գրեթե նույն հարաբերակցության մեջ է գտնվում, ինչպես օկտավաները միմյանց նկատմամբ, այլ կերպ ասած՝ դրանցից որևէ մեկի ատոմային կշիռը երկու անգամ ավելի մեծ է քան մյուսինը: Այս չնչին անճշգրտությունը, այսինքն՝ ոչ ամբողջական օկտավային հարաբերությունը, պայմանավորված է այն փաստով, որ համընդհանուր քիմիան հաշվի չի առնում նյութի բոլոր հատկությունները, մասնավորապես «տիեզերական հատկությունները»: Այն քիմիան, որից մենք այժմ խոսում ենք այլ հիմքունքներով է ուսումնասիրում մատերիան: Այս քիմիան կամ ալքիմիան դիտարկում է մատերիան, առաջին հերթին՝ իր ֆունկցիաների տեսանկյունից, որոնք որոշում են դրա տեղը տիեզերքում և այլ մատերիաների հետ ունեցած հարաբերությունը, իսկ այնուհետև այն տեսանկյունից, թե ինչպիսի հարաբերության մեջ է գտնվում մատերիան մարդու և նրա ֆունկցիաների հետ: Նյութի ատոմ ասելով՝ նկատի ունենք տվյալ նյութի որոշակի փոքր քանակություն, որը պահպանում է բոլոր իր

քիմիական, տիեզերական և հոգեկան հատկությունները, այն է՝ մտավոր կարողության որոշակի մակարդակ: Հետևաբար, «ատոմ» գաղափարը կարող է վերաբերել ոչ միայն տարրերին, այլ նաև բոլոր այն միացություններին, որոնք տիեզերքում կամ մարդու կյանքում կատարում են որոշակի ֆունկցիա: Կարող է գոյություն ունենալ ջրի ատոմ, օդի ատոմ (մթնոլորտային օդ՝ մարդու շնչառության համար), հացի ատոմ, մսի ատոմ և այլն: Որոշակի ջերմաստիճանի դեպքում օգտագործելով հատուկ ջերմաչափ՝ կտեսնենք, որ ջրի ատոմը կազմում է ջրի մեկ տասներորդական կուբիկական միլիմետրի մեկ տասներորդ մասը: Դա կլինի ջրի շատ փոքր կաթիլ, որը որոշ պայմաններում հնարավոր է տեսնել անզեն աչքով:

Այս ատոմը ջրի ամենափոքր քանակությունն է, որը պահպանում է *ջրի բոլոր հատկությունները*: Հետագա տրոհման հետևանքով այս հատկությունները անհետանում են. այս դեպքում դա կլինի արդեն ոչ թե ջուր, այլ մի բան, որը մոտ է ջրի գազային վիճակին՝ գոլորշի, որը իր քիմիական բաղադրությամբ որևէ կերպ չի տարբերվի ջրիկ

վիճակում գտնվող ջրից, սակայն ունի այլ ֆունկցիաներ և հետևաբար տարբեր տիեզերական և հոգեկան հատկություններ:

«Ջրածնի աղյուսակը» հնարավոր է դարձնում ուսումնասիրել մարդու օրգանիզմը կազմավորող բոլոր նյութերը ըստ նրա, թե վերջիններս ինչ հարաբերության մեջ են գտնվում տիեզերքի տարբեր մակարդակների հետ: Եվ քանի որ մարդու յուրաքանչյուր ֆունկցիա որոշակի նյութերի գործողության արդյունք է, և քանի որ յուրաքանչյուր նյութ կապված է տիեզերքի որոշակի մակարդակի հետ, ապա այս փաստը մեզ հնարավորություն է տալիս սահմանելու մարդու ֆունկցիաների և տիեզերքի մակարդակների միջև եղած հարաբերությունը:

Ես պետք է խոստովանեմ, որ այս պահին «ճառագայթման երեք օկտավաները» և դրանցից առաջացած «ջրածինների աղյուսակը» երկար ժամանակ մեզ համար արգելք էին հանդիսանում: Եռյակների անցումների և մատերիայի կառուցվածքի հիմնարար և ամենաեական սկզբունքը ես ավելի ուշ հասկացա և այդ մասին կխոսեմ ճիշտ եկած պահին:

Գ.-ի դասախոսությունները շարադրելիս ես փորձում եմ պահպանել ժամանակագրական հաջորդականությունը, չնայած՝ երբեմն դա անհարթ է, քանի որ որոշ բաներ անընդմեջ կրկնվում էին՝ այսպես թե այնպես ընդգրկվելով գրեթե բոլոր դասախոսություններում:

Ինձ վրա անձամբ «ջրածինների աղյուսակը» մեծ տպավորություն գործեց, որը ավելի ուշ պիտի շատ ավելի ուժգնանար: «Երկրից երկինք տանող այս աստիճանը» ինձ հաղորդում էր երկիր մոլորակի հանդեպ նախկինում տաժած մի զգացողություն՝ հիշեցնելով, որ մի քանի տարի առաջ իմ փորձարկումների ժամանակ ես նկատել էի աշխարհում ամեն ինչի փոխկապակցվածությունը, ամբողջականությունը և «մաթեմատիկական լինելը»¹: Այս դասախոսությունը իր տարբեր տարբերակներով շատ անգամ կրկնվում էր կապված կամ «արարման ճառագայթի» բացատրության, կամ օկտավաների օրենքների հետ: Սակայն որքան էլ, որ տարօրինակ զգացողություն հաղորդեր այն ինձ, ես ունակ չէի, առաջին անգամ լսելով այս ամենի մասին, ճշգրտորեն գնահատական տալ: Ամենից առաջ՝ ես անմիջապես չհասկացա, որ այս գաղափարները շատ դժվար է ասիմիլացնել, որ դրանք ավելի խորունկ բովանդակություն ունեն, քան առաջին հայացքից:

Ես մի դրվագ իմ հիշողության մեջ եմ պահել: Այն տեղի ունեցավ այս դասախոսության կրկնության ժամանակ, որտեղ քննարկվում էր մատերիայի կառուցվածքը կապված տիեզերքի մեխանիկայի հետ: Դասախոսությունը կարդում էր Պ.-ն՝ մի երիտասարդ ինժեներ, որ պատկանում էր Գ.-ի մոսկովյան աշակերտների խմբին և ում մասին ես Գ.-ին էի նշել:

Երբ եկա, դասախոսությունն արդեն սկսվել էր: Լսելով ծանոթ բառեր՝ ինձ թվաց, որ արդեն լսել եմ այս դասախոսությունը և այդ պատճառով նստելով մեծ ճաշասենյակի մի անկյունում՝ ես սկսեցի ծխել ու մտածել մեկ այլ բանի մասին: Գ.-ն նույնպես այնտեղ էր:

- Ինչու՞ չլսեցիր դասախոսությունը, - նա ինձ հարցրեց դասախոսության ավարտից հետո:

- Բայց ես արդեն լսել եմ այն, - ասեցի ես: Գ.-ն հանդիմանաբար թափահարեց իր գլուխը: Անկեղծորեն ես չհասկացա, թե ինչ էր նա ինձնից ակնկալում և ինչու ես պետք է երկրորդ անգամ լսեի միևնույն դասախոսությունը:

¹ Տիեզերքի նոր մոդելը, գլուխ 8, «Էքսպերիմենտալ միստիցիզմ»

Ես դա հասկացա շատ ավելի ուշ, երբ դասախոսությունները ավարտվել էին և ես փորձում էի ամփոփել մտովի այն ամենն, ինչ լսել էի: Շատ հաճախ, խոհեղով մեկ հարցի շուրջ, ես հստակորեն հիշում էի, որ այդ մասին խոսվել էր դասախոսություններից մեկի ժամանակ: Բայց թե կոնկրետ ինչ էր ասվել, ես միշտ չէ որ մտաբերում էի. շատ բան կտայի, որպեսզի կարողանայի այն կրկին լսել:

Գրեթե երկու տարի անց, 1917թ. նոյեմբերին մեզնից վեց հոգանոց մի խումբ, որոնց թվին էր պատկանում նաև Գ.-ն, բնակվում էր Սև ծովի ափին՝ Թյուափսից քսան հինգ մղոն տարածության վրա, մի փոքր առանձնատանը, որը մոտակա բնակավայրից գտնվում էր ավելի քան մեկ մղոն հեռավորության վրա: Մի երեկո նստեցինք և զրուցեցինք: Արդեն ուշ էր, և եղանակը սարսափելի էր. հյուսիսարևելյան քամին փչում էր և փոտորկում՝ բերելով մեկ անձրև, մեկ ձյուն:

Ես «ջրածնի աղյուսակի» որոշակի հանումներից էի մտորում, մասնավորապես այս աղյուսակում տեղ գտած մեկ անհամապատասխանության վերաբերյալ, որն տարբերվում էր այն աղյուսակից, որի մասին մենք ավելի ուշ իմացանք: Իմ հարցը վերաբերում էր նորմալ մակարդակից ներքև գտնվող ջրածիններին: Ավելի ուշ ես կբացատրեմ հստակորեն, թե ինչին էր վերաբերում իմ հարցը և թե ինչ պատասխանեց Գ.-ն երկար ժամանակ անց:

Այս անգամ նա ինձ ուղղակիորեն չպատասխանեց:

- Դու պետք է իմանայիր դա, - ասեց նա, - այդ մասին խոսվել է Պետերբուրգում դասախոսությունների ժամանակ: Հնարավոր է, որ չես լսել: Հիշում ես մի դասախոսություն կար, որ դու չցանկացար լսել ասելով, թե արդեն գիտես այդ մասին: Սակայն այն ժամանակ հենց այն մասին խոսվեց, ինչի մասին, որ դու այժմ ցանկանում ես իմանալ:

Կարճատև լռությունից հետո նա ասեց.

- Լավ, դու իմանայիր, որ որևէ մեկը միևնույն դասախոսությունն է կարդալու Թուուպսում, կգնայի ր ոտքով այնտեղ:

- Կգնայի, - ասացի ես:

Եվ իրականում, չնայած ես շատ լավ պատկերացնում էի, թե որքան երկար, դժվարին և ցուրտ կլինե՞ր այդ ճանապարհը կտրել անցնելը, միևնույն ժամանակ գիտեի, որ դա ինձ ետ չէր պահի:

Գ.-ն ծիծաղեց:

- Դու իսկապե՞ս կգնայիր, - հարցրեց նա: - Պատկերացրու, քսան հինգ մղոն, մթություն, անձրև, քամի:

- Պատկերացնելու բան չկա, - պատասխանեցի ես: - Դու գիտես, որ ես ավելի քան մեկ անգամ անցել եմ այս ճանապարհը, երբ չկային ձիեր կամ երբ սայլակառքում ինձ համար տեղ չկար. և դա արել եմ ոչ թե որևէ պարզատրության համար, այլ այն պարզ պատճառով, որ այլընտրանք չկար: Իհարկե, անխոս կգնայի, եթե որևէ մեկը դասախոսություն կարդար այս ամենի մասին Թուուպսում:

- Այո, ասեց Գ.-ն, - միայն թե մարդիկ կարողանային նման կերպով դատել: Սակայն իրականում նրանք այլ կերպ են դատում: Առանց որևէ անհրաժեշտության նրանք կհաղթահարեն ցանկացած դժվարություն: Սակայն կարևորության դեպքում, ինչը կարող է նրանց համար էական լինել, նրանք նույնիսկ մատ էլ չեն շարժի: Այսպիսին է մարդկային բնույթը: Մարդը երբևիցե չի ցանկանում վճարել որևէ բանի համար և ամենից առաջ՝ այն բանի համար, ինչը կարող է նրա համար չափազանց մեծ կարևորություն ունենալ: Դու այժմ գիտես, որ ամեն ինչի համար պետք է վճարել և պետք է վճարվի այն համամասնությամբ, որքան մարդ ստանում է: Բայց սովորաբար մարդն այլ կերպ է դատում: Մանրուքների համար, անօգուտ բաների համար նա ամեն ինչ

պատրաստ է վճարել: Սակայն կարևոր նշանակություն ունեցող բանի համար՝ երբեք: Դա պետք է նրան ինքնաբերաբար հասնի:

Իսկ ինչ վերաբերում է դասախոսությանը, այն ինչի մասին դու այժմ հարցնում ես խոսվել է Սանկտ Պետերբուրգում: Եթե լսած լինեիր այն ժամանակ, ապա այժմ կհասկանայիր, որ երկու գծապատկերների միջև որևէ հակասություն չկա և չի էլ կարող լինել:

Սակայն վերադառնանք Սանկտ Պետերբուրգ:

Ետադարձ հայացք գցելով՝ ես չեմ դադարում զարմանալ այն բանի վրա, թե որքան արագությամբ է Գ.-ն մեզ հաղորդում համակարգի առաջնային գաղափարները: Իհարկե շատ բան կախված է նրա շարադրման ոճից, բոլոր գլխավոր և էական գաղափարները առաջ քաշելու նրա ապշեցուցիչ կարողությունից, ինչպես նաև շատ չմանրանալուց՝ մինչև բոլոր գլխավոր կետերը չընկալվեն մարդկանց կողմից:

«Ջրածիններից» հետո Գ.-ն անմիջապես շարունակեց:

- Մենք ցանկանում ենք «անել» (այսպես սկսեց նա հաջորդ դասախոսությունը),- այն ամենն ինչ մենք անում ենք կապված է և սահմանափակված մեր օրգանիզմի կողմից արտադրվող էներգիայի չափից: Յուրաքանչյուր ֆունկցիա, յուրաքանչյուր վիճակ, յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր զգացմունք պահանջում է որոշակի նյութ և որոշակի էներգիա,:

Մենք գալիս ենք այն եզրակացության, որ պետք է «հիշենք ինքներս մեզ»: Սակայն մենք կարող ենք «հիշել ինքներս մեզ» միայն այն դեպքում, եթե «սեփական անձը հիշելու» համար ունենանք բավարար էներգիա: Մենք կարող ենք ուսումնասիրել, հասկանալ կամ զգալ որևէ բան միայն այն դեպքում, եթե ունենք հասկանալու, զգալու կամ ուսումնասիրելու համար էներգիա:

Ինչպես պետք է վարվի այն մարդը, երբ սկսում է գիտակցել, որ չունի բավարար էներգիա՝ ձեռք բերելու համար այն նպատակները, որ նա իր առջև դրել է:

Մրա պատասխանն այն է, որ յուրաքանչյուր հասարակ մարդ ունի բավարար էներգիա՝ իր վրա աշխատանք սկսելու համար: Անհրաժեշտ է միայն սովորել, թե ինչպես արդյունավետ աշխատանքի համար խնայել մեր ունեցած էներգիայի մեծ մասը՝ խուսափելով դրա անարդյունավետ օգտագործումից:

Էներգիան ծախսվում է գլխավորապես ավելորդ և տհաճ զգացմունքների, հնարավոր և անհնարին տհաճ ակնկալիքների վրա, վատ տրամադրության, անիմաստ շտապողականության, նյարդայնության, գրգռվածության, երևակայության, անուրջների և այլնի վրա: Էներգիան ծախսվում է կենտրոնների սխալ աշխատանքի վրա՝ մկանների ավելորդ լարվածության վրա, որը համամասնական չէ աշխատանքի արդյունքներին, մշտական շաղակրատանքի վրա, որը կլանում է էներգիայի մեծ մասը, մշտական «հետաքրքրասիրության» վրա, որը վերաբերում է մեր շուրջը և մարդկանց հետ տեղի ունեցող բոլոր իրադարձություններին, ինչը իրականում մեզ հետաքրքիր չէ, «ուշադրության» շարունակական սխալ կիրառման վրա, և այսպես շարունակ:

Պայքարելով իր կյանքի այս բոլոր սովորությունների դեմ՝ մարդը հսկայական քանակությամբ էներգիա է խնայում և այս էներգիայի օգնությամբ նա շատ հեշտությամբ կարող է սկսել սեփական անձի ուսումնասիրության և կատարելագործման աշխատանքը:

Հետագայում, սակայն, խնդիրը ավելի է խորանում: Որոշ չափով հավասարակշռության բերելով իր մեքենան և հավաստիանալով, որ այն սպասվածից ավելի մեծ քանակությամբ էներգիա է արտադրում՝ մարդն, ամեն դեպքում, գալիս է այն

եզրակացության, որ այս էներգիան բավարար չէ և, եթե նա ցանկանում է շարունակել իր աշխատանքը, ապա պետք է մեծացնի իր կողմից արտադրվող էներգիայի չափը:

Մարդու օրգանիզմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սա հնարավոր է:

Մարդու օրգանիզմը իրենից ներկայացնում է քիմիական գործարան, որը նախատեսված է բավականին մեծ արտադրության համար: Սակայն կյանքի սովորական պայմաններում այս գործարանը չի կարողանում ամբողջովին օգտագործել իր հնարավորությունները, քանի որ մեքենաների միայն մի փոքր մասն է օգտագործվում, որը արտադրում է նյութի այն քանակությունը, որն անհրաժեշտ է իր սեփական գոյությունը պահպանելու համար: Գործարանային նման աշխատանքը խնայողության տեսանկյունից ակնհայտորեն չափազանց անարդյունավետ է: Գործարանն իրականում ոչինչ չի արտադրում. իր բոլոր մեքենաները, կատարելագործված սարքավորումները որևէ նպատակի չեն ծառայում. դրանով գործարանն ընդամենը պահպանում է իր գոյությունը:

Գործարանի աշխատանքը կայանում է մի տեսակի մատերիան մեկ այլ տեսակի մատերիայի վերածելու մեջ, այն է՝ տիեզերքի տեսանկյունից առավել կոշտ մատերիաները պետք է վերածվեն առավել նուրբ մատերիայի: Գործարանը աշխարհից որպես հումք է ստանում մի շարք կոշտ «ջրածիններ» և մի շարք բարդ քիմիական գործընթացների միջոցով վերածում դրանք առավել նուրբ ջրածինների: Սակայն կյանքի սովորական պայմաններում մարդկային գործարանի կողմից առավել նուրբ ջրածինների արտադրությունը անբավարար է, եթե հաշվի առնենք մեզ հետաքրքրող կենտրոնների աշխատանքը և գիտակցության բարձր մակարդակի հասնելու հնարավորությունը. դրանք բոլորն էլ ծախսվում են գործարանի գոյության պահպանման վրա: Եթե մեզ հաջողվեր արտադրությունը հասցնել իր մաքսիմումին, ապա կկարողանայինք խնայել նուրբ «ջրածինները»:

Այնուհետև ողջ մարմինը, բոլոր հյուսվածքները, բոլոր բջիջները կհագեցվեին այս նուրբ «ջրածիններով», որոնք աստիճանաբար կտոգորվեին նրանցով և կբյուրեղանային հատուկ ձևով: Նուրբ «ջրածինների» այս բյուրեղացումը ողջ օրգանիզմը աստիճանաբար նոր մակարդակի է հասցնում՝ գոյը դնելով ավելի բարձր հարթության վրա: Սակայն սա կյանքի սովորական պայմաններում հնարավոր չէ, քանի որ «գործարանը» ծախսում է այն ամենն ինչ արտադրում է:

«Սովորիք տարանջատել նուրբը կոպիտից»՝ «Հերմես Տրիսմեգիստոսի գմբուխտե հաբերից» վերցված այս սկզբունքը, վերաբերում է մարդկային գործարանի աշխատանքին, և եթե մարդը սովորի նուրբը կոպիտից առանձնացնել, այսինքն՝ եթե նրան հաջողվի նուրբ «ջրածինների» արտադրությունը հասցնել մաքսիմումի, նա հենց այս փաստով իր համար ներքին աճի հնարավորություն կստեղծի, ինչը այլ կերպ հնարավոր չէ ձեռք բերել:

Ներքին աճը, մարդու ներքին մարմինների աճը՝ աստեղային, մտավոր և այլն, նյութական գործընթաց է, որը ամբողջովին նման է մարդու ֆիզիկական մարմնի աճին: Աճի համար երեխան պետք է լավ սնվի, նրա օրգանիզմը պետք է առողջ պայմաններում լինի, որպեսզի այդ սնունդից նախապատրաստվի հյուսվածքների աճի համար անհրաժեշտ նյութը:

Նույնն էլ անհրաժեշտ է «աստեղային մարմնի» աճի համար: Դեռ ավելին՝ «աստեղային մարմինը» իր աճի համար այն նույն նյութերի պահանջն ունի, որոնք անհրաժեշտ են ֆիզիկական մարմինը պահպանելու համար. պարզապես դրանք անհրաժեշտ են շատ ավելի մեծ քանակությամբ: Եթե ֆիզիկական մարմինը սկսի արտադրել բավարար չափով նուրբ նյութեղեն և դրանում ձևավորվի «աստեղային մարմին», այս աստեղային օրգանիզմը իր պահպանման համար կպահանջի ավելի քիչ

քանակությամբ նյութեղեն, քան այն կպահանջի իր աճի համար: Այս նյութերի մնացորդը կարող է այնուհետև օգտագործվել «մտավոր մարմնի» ձևավորման համար, որը կաճի այն նյութերի օգնությամբ, որոնցով սնվում է «աստեղային մարմինը», բայց իհարկե «մտավոր մարմնի» աճը այս նյութեղենի ավելի մեծ քանակություն կպահանջի, քան «աստեղային մարմնի» աճը և սնուցումը: «Մտավոր մարմինը» սնուցող նյութեղենի մնացորդը կօգտագործվի չորրորդ մարմնի աճի համար: Մակայն բոլոր դեպքերում էլ մնացորդը պետք է շատ մեծ լինի: Ավելի բարձր մարմինների աճի և սնուցման համար բոլոր անհրաժեշտ նյութերը պետք է ձևավորվեն ֆիզիկական մարմնի ներսում, իսկ ֆիզիկական մարմինը կկարողանա արտադրել դրանք միայն այն դեպքում, եթե մարդկային գործարանն պատշաճ և խնայողաբար աշխատի: Օրգանիզմի կյանքը, հոգեկան աշխատանքը, գիտակցության բարձրագույն գործառնությունները, բարձրագույն մարմինները պահպանելու համար բոլոր անհրաժեշտ նյութերը օրգանիզմի կողմից են արտադրվում՝ դրսից ներս մտնող սննդի միջոցով:

Մարդկային օրգանիզմը ստանում է երեք տեսակի սնունդ.

1. սովորական սնունդը, որ մենք ուտում ենք,
2. օդը, որ շնչում ենք,
3. մեր տպավորությունները:

Դժվար չէ համաձայնել, որ օդը օրգանիզմի համար որոշ տեսակի սնունդ է: Մակայն առաջին հայացքից դժվար կլինի հասկանալ, թե ինչպես կարող են տպավորությունները հանդես գալ՝ որպես սնունդ: Մենք պետք է հիշենք, որ ցանկացած արտաքին տպավորությունից, լինի դա ձայնային, տեսողական կամ հոսատական, մենք դրսից որոշակի չափով էներգիա ենք ստանում, որոշակի քանակությամբ տատանումներ: Այս էներգիան, որ դրսից մուտք է գործում մեր օրգանիզմ, սնունդ է: Դեռ ավելին՝ ինչպես արդեն ասվել է, էներգիան չի կարող փոխանցվել առանց մատերիայի: Եթե արտաքին տպավորությունն իր հետ օրգանիզմ է ներմուծում արտաքին էներգիա, ապա նշանակում է, որ արտաքին մատերիան նույնպես ներթափանցելով օրգանիզմ, բառիս բուն իմաստով, սնուցում է այն:

Իր նորմալ գոյության համար օրգանիզմը պետք է ստանա սննդի բոլոր երեք տեսակները՝ ֆիզիկական սնունդ, օդ և տպավորություններ: Օրգանիզմը չի կարող գոյություն ունենալ մեկ կամ երկու տեսակի սննդի միջոցով. անհրաժեշտ են բոլոր երեքը: Մակայն այս սնունդների հարաբերությունը մեկը մյուսի նկատմամբ և նրանց կարևորությունը օրգանիզմի համար նույնը չեն: Օրգանիզմը կարող է գոյատևել համեմատաբար երկար ժամանակ առանց թարմ ֆիզիկական սնունդի մատակարարման: Հայտնի են քաղցի դեպքեր, որոնք տևել են ավելի քան վաթսուն օր, որի ժամանակ օրգանիզմը չի կորցրել իր կենսունակությունը և շատ արագ վերականգնվել է՝ սնունդ ընդունելուց հետո: Իհարկե նման քաղցը չի կարելի ամբողջական համարել, քանի որ արհեստական սովահարության բոլոր այս դեպքերում մարդիկ ջուր են խմել: Այնուամենայնիվ, նույնիսկ առանց ջրի և առանց սննդի մարդը կարող է ապրել մի քանի օր: Առանց օդի նա կարող է գոյատևել ընդամենը մի քանի րոպե, երկու-երեք րոպեից ոչ ավելին: Առանց տպավորությունների մարդը ոչ մի վայրկյան չի կարող ապրել: Եթե տպավորությունների հոսքը ինչ-որ ձևով կանգնեցվեր կամ, եթե օրգանիզմը զրկվեր տպավորություններ ստանալու հնարավորությունից, այն անմիջապես կմահանար: Դրսից ստացված տպավորությունների հոսքը նման է փոխանցման գոտու, որը մեզ հաղորդում է շարժում: Մեզ համար ամենագլխավոր շարժիչը բնությունն է, մեզ շրջապատող աշխարհը: Բնությունը մեր տպավորությունների միջոցով մեզ է հաղորդում այն էներգիան, որով մենք ապրում, շարժվում և գոյատևում ենք: Եթե այս էներգիայի ներհոսքը դադարեցվի, մեր մեքենան անմիջապես կդադարի իր

աշխատանքը: Այսպիսով, սնունդի երեք տեսակներից մեզ համար ամենակարևորը տպավորություններն են, չնայած ակնհայտ է, որ մարդը չի կարող երկար գոյատևել միայն տպավորությունների հաշվին: Տպավորությունները և օդը թույլ են տալիս մարդուն ավելի երկար գոյատևել: Տպավորությունները, օդը և ֆիզիկական սնունդը թույլ են տալիս մարդուն ապրել մինչև իր կյանքի համար նախատեսված ավարտը և արտադրել նյութեր, որոնք անհրաժեշտ են ոչ միայն կյանքի պահպանման համար, այլ նաև ավելի բարձր մարմինների ստեղծման և աճի համար:

Օրգանիզմ ներթափանցող նյութերը ավելի նուրբ նյութերի փոխակերպելու գործընթացը առաջնորդվում է *օկտավաների* օրենքով:

~~Եկեք~~ Դիտարկենք մարդկային օրգանիզմը որպես երեք հարկանի գործարան: Այս գործարանի վերին հարկը բաղկացած է մարդու գլխից, մեջտեղի հարկը՝ կրծքավանդակից, իսկ ներքինը՝ ստամոքսից, մեջքից և մարմնի ստորին մասից:

ԳԼՈՒԽ

ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿ

ՄԵՁՔ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍ

Պատկեր 25

Ֆիզիկական սնունդը H786-ն է կամ ճառագայթման երրորդ տիեզերական օկտավայի «յա», «սոլ», «ֆա»-ն: Այս «ջրածինը» ներթափանցում է օրգանիզմի ստորին հարկը՝ որպես «թթվածին»՝ «դո» 768:

Երկիր մոլորակ

դո

սի

յա C

սոլ O H768

ֆա N

դո

768

Սննդի (H768) մուտքը օրգանիզմ:

Պատկեր 26

Օրգանիզմում առկա «թթվածին» 768-ը հանդիպում է «ածխածին» 192-ի հետ: O768-ի և C192-ի միացումից առաջանում է N384-ը: N384-ը հաջորդ «ոե» նոտան է:

O «դո»

768

«ոե» N

384

192 C

Օրգանիզմում սննդի (H768) մարսողության սկիզբը:

Նկատարում՝ մարմնում առկա «ածխածինները» նշված են հետևյալ նշանով:

Պատկեր 27

«Ռե» 384-ը, որ հաջորդ եռյակում վերածվում է «թթվածնի», օրգանիզմում հանդիպում է «ածխածին» 96-ին և դրա հետ միասին առաջացնում է մի նոր «ազոտ» 192, որը «մի» 192 նոտան է:

մի N	ռե	96 C
192	384 (N=O)	

Օրգանիզմում սննդի (H768) մարսողության շարունակությունը:

Պատկեր 28

Ինչպես հայտնի է օկտավաների օրենքից՝ «մի»-ն բարձրացող օկտավայում ինքնուրույն չի կարող անցում կատարել «ֆայի»։ լրացուցիչ ցնցում է անհրաժեշտ: Եթե լրացուցիչ ցնցում տեղի չի ունենում «մի» 192 նյութը ինքնուրույն չի կարող անցնել ամբողջական «ֆա» նոտային:

Օրգանիզմի տվյալ մասում, որտեղ «մի» 192-ը , կարծես, պետք է կանգ առներ, մուտք է գործում «երկրորդ սնունդը»՝ օդը, «դո» 192-ի տեսքով, այն է՝ ճառագայթման երկրորդ տիեզերական օկտավայի «մի», «ռե», «դո» նոտաները: «Դո» նոտան պարունակում է բոլոր անհրաժեշտ կիսատոները, այն է՝ հաջորդ տոնին անցում կատարելու համար անհրաժեշտ էներգիան. այն իր էներգիայի մի մասը հաղորդում է «մի» նոտային, որն ունի միևնույն խտությունը: «Դոյի» էներգիան «մի» 192-ին բավարար ուժ է հաղորդում, որպեսզի միանալով օրգանիզմում արդեն առկա «ածխածին» 48-ին՝ անցնի «ազոտ» 96-ին: «Ազոտ» 96-ը կլինի «ֆա» նոտան:

մի				
ռե				
դո	H192			
սի				
		C 48	մի	ֆա N
		դո	192	96
		192	N=O	

Օդի (192) մուտքը օրգանիզմ և սննդի օկտավայի մի-ֆա ինտերվալում դրա առաջացրած «ցնցումը»:

Պատկեր 29

«Ֆա» 96-ը, միավորվելով օրգանիզմում առկա «ածխածին» 24-ի հետ, վերածվում է «ազոտ» 48-ի՝ «սուլ» նոտայի:

C 24 N=O ֆա սուլ N

Մանդի օկտավայի շարունակությունը,
սննդարար նյութերի փոխակերպումը «սոլ» 48-ի:
Պատկեր 30

«Սոլ» 48 նոտան, միանալով օրգանիզմում առկա «ածուխ» 12-ին, վերածվում է «ազոտ» 24-ի «լյա» 24-ի:

C 12 լյա սոլ N=O
24 N 48

Մանդի օկտավայի շարունակությունը,
սննդարար նյութերի փոխակերպումը «լյա» 24-ի:
Պատկեր 31

«Լյա» 24-ը միանում է օրգանիզմում առկա «ածխածին» 6-ին և վերածվում «ազոտ» 12-ի կամ «սի» 12-ի: «Սի» 12-ն օրգանիզմում ֆիզիկական սնունդից ստացվող ամենաբարձր նյութն է, որը ձեռք է բերվում օդի միջոցով լրացուցիչ «ցնցումից»:

N=O
լյա սի 6 C
24 12

Մանդի օկտավայի շարունակությունը,
սննդարար նյութերի անցումը «սի» 12-ի:
Պատկեր 32

«Դո» 192-ը (օդը), «թթվածնի» տեսքով ներթափանցելով գործարանի մեջտեղի հարկը և իր էներգիան մասամբ հաղորդելով «մի» 192-ին, իր հերթին որոշակի պահի միանում է օրգանիզմում առկա «ածխածին» 48-ին և անցնում է «ռե» 96-ի:

O դո 48 C ռե
192 96 N

Օրգանիզմում օդի մարսողության սկիզբը:
Պատկեր 33

«Ածխածին» 24-ի օգնությամբ «ռե» 96-ը անցնում է «մի» 48-ի և սրանով եզրափակվում է երկրորդ օկտավայի զարգացումը: «Միից» «ֆա» անցման համար անհրաժեշտ է լրացուցիչ ցնցում, սակայն այս պահին բնությունը որևէ լրացուցիչ ցնցում չի պատրաստել, իսկ երկրորդ օկտավան օդի օկտավան, չի կարող շարունակել իր զարգացումը և կյանքի սովորական պայմաններում այն չի էլ շարունակում զարգանալ:

Օրգանիզմում օդի օկտավայի շարունակությունը:
Պատկեր 34

Երրորդ օկտավան սկսվում է «դո» 48-ից:

Տպավորությունները օրգանիզմ են ներթափանցում «թթվածին» 48-ի, այն է՝ Արեգակ-Երկրագունդ տիեզերական օկտավայի «յա», «սոլ», «ֆա» նոտաների տեսքով: «Դո» 48-ը ունի բավարար էներգիա հաջորդ նոտա անցնելու համար, սակայն օրգանիզմի այն մասում, ուր ներթափանցում է «դո» 48-ը, անհրաժեշտ է «ածխածին» 12, ինչը բացակայում է: Միևնույն ժամանակ «դո» 48-ը կապի մեջ չի մտնում «մի» 48-ի հետ. հետևաբար նա ինքնուրույն չի կարող անցնել հաջորդ նոտա, ոչ էլ կարող է իր էներգիայի մի մասը հաղորդել «մի» 48-ին:

դո

սի

յա	H48	դո	24C	մի N	ռե
սոլ		48		48	96 O
ֆա					

Տպավորությունների մուտքը օրգանիզմ:
Պատկեր 35

Նորմալ պայմաններում՝ այն է նորմալ գոյությունը պահպանելու պայմաններում, գործարանի կողմից նուրբ նյութերի արտադրումը այս փուլում կանգ է առնում և երրորդ օկտավան հնչում է միմիայն՝ որպես «դո»: Գործարանի կողմից բարձրագույն արտադրվող նյութը «սի» 12-ն է, և բոլոր իր բարձրագույն գործառնությունների համար գործարանը կարող է օգտագործել այս բարձրագույն նյութը:

դո	մի	սոլ	դո	մի	ռե	ֆա	յա	դո	ռե	սի
48	48	48	192	192	96	96	24	768	384	12

Երեք տեսակի սնունդը, օրգանիզմում H768-ի և H192-ի մարտոդությունը՝ մեխանիկական «ցնցման» օգնությամբ: Օրգանիզմի նորմալ վիճակը և առավել նուրբ նյութերի նորմալ արտադրությունը սննդարար նյութերից:
Պատկեր 36

Սակայն հնարավոր է մեծացնել արդյունավետությունը, այսինքն՝ օդային օկտավայի և տպավորությունների օկտավայի հետագա զարգացման հնարավորությունը: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ տեսակի արհեստական «ցնցում» այն փուլում, որտեղ ընդհատվում է երրորդ օկտավայի սկիզբը: Սա նշանակում է, որ «արհեստական ցնցումը» պետք է ուղղվի «դո» 48 նոտային:

Սակայն ի՞նչ նկատի ունենք «արհեստական ցնցում» ասելով: Դա կապված է տպավորությունը ստանալու պահի հետ: «Դո» 48 նոտան այն պահին է, երբ տպավորությունը ներս է թափանցում մեր գիտակցություն: «Արհեստական ցնցում» այս փուլում նշանակում է որոշակի տեսակի ջանք, որը գործադրվում է տպավորությունը ստանալու պահին:

Նախկինում բացատրվել է, որ կյանքի սովորական պայմաններում մենք *ինքներս մեզ չենք հիշում*: Մենք չենք հիշում, չենք զգում, չենք գիտակցում ինքներս մեզ ընկալման, զգացմունքի, մտքի կամ գործողության պահին: Եթե մարդը հասկանա այս ամենն ու փորձի հիշել սեփական անձը, ապա ցանկացած տպավորություն ստանալիս այն, այսպես ասած, կկրկնապատկվի: Սովորական հոգեվիճակում ես պարզապես նայում եմ փողոցին: Սակայն, եթե ես հիշեմ ինքս ինձ, ապա պարզապես փողոցին չեմ նայի. ես կզգամ, որ նայում եմ. կարծես ինքս ինձ ասեմ՝ «ես նայում եմ»: Փողոցից ստացած մեկ տպավորության փոխարեն, ես ստանում եմ երկու տպավորություն, մեկը՝ փոխոցի, մյուսը՝ սեփական անձիս, որ նայում է փողոցին: Երկրորդ տպավորությունը, որ սեփական անձս հիշելու արդյունք է, «լրացուցիչ ցնցումն է»: Դեռ ավելին՝ շատ հաճախ սեփական անձը հիշելու հետ կապված լրացուցիչ զգացողությունը իր հետ բերում է զգացմունքի մի տարր, այն է՝ մեքենայի աշխատանքում ներգրավվում է որոշ քանակությամբ «ածխածին» 12 այն հատվածում, որտեղ, որ անհրաժեշտ է: Սեփական անձը հիշելու ջանքերը, տվյալ տպավորության պահին սեփական անձի ուսումնասիրությունը, ստացված տպավորության ուսումնասիրությունը այն ստանալու պահին, տպավորությունների արձանագրումը և միաժամանակ ստացված տպավորությունների սահմանումը, այս ամենը միասին վերցված կրկնապատկում է տավարությունների ինտենսիվությունը՝ «դո» 48-ը տեղափոխելով «ոե» 24-ի: Միաժամանակ մեկ նոտայից մյուսին անցնելու համար գործադրած ջանքը, ինչպես նաև 48-ից 24-ի անցումը, երրորդ օկտավայի «դո» 48-ին հնարավորություն է տալիս կապի մեջ մտնել երկրորդ օկտավայի «մի» 48-ի հետ՝ այս նոտային հաղորդելով անհրաժեշտ քանակությամբ էներգիա, «միից» «ֆա» անցում կատարելու համար: Այսպիսով, «դո» 48-ին փոխանցված «ցնցումը» տարածվում է նաև «մի» 48-ի վրա՝ զարգացման հնարավորություն տալով երկրորդ օկտավային:

«Մի» 48-ը անցնում է «ֆա» 24-ի, «ֆա» 24-ը անցնում է «սոլ» 12-ի, «սոլ» 12-ը անցնում է «լյա» 6-ի: «Լյա» 6-ը օրգանիզմի կողմից օդից՝ երկրորդ տեսակի սննդից, արտադրվող բարձրագույն մատերիան է: *Սակայն սա միայն ձեռք է բերվում տպավորություն ստանալու պահին՝ գիտակից ջանք գործադրելու շնորհիվ*: (Տես պատկեր 37)

Անհրաժեշտ է հասկանալ, թե սա ինչ է նշանակում: Մենք բոլորս էլ նույն օդն ենք շնչում: Բացի այն տարրերից, որ հայտնի են մեր գիտությանը՝ օդը պարունակում է գիտությանն անհայտ, անսահմանելի և ուսումնասիրությանն անհասանելի մի շարք նյութեր: Սակայն հնարավոր է հստակ կերպով վերլուծել ներշնչած և արտաշնչած օդը: Այս հստակ վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև տարբեր մարդկանց կողմից ներշնչած օդը նույնն է, այնուամենայնիվ արտաշնչած օդը բացարձակապես տարբեր է:

դո մի լյա ֆա սոլ
48 48 6 24 12

Օդային օկտավայի զարգացումը՝ առաջին *գիտակից* «ցնցումից» հետո:
Պատկեր 37

Եկեք պատկերացնենք, որ մեր շնչած օդը բաղկացած է մեր գիտությանն անհայտ քսան տարբեր տարրերից: Որոշ քանակությամբ տարբեր կլանվում են օդը շնչող ցանկացած մարդու կողմից: Ենթադրենք, որ այս տարրերից հինգը միշտ ներշնչվում են: Հետևաբար յուրաքանչյուր մարդու կողմից արտաշնչված օդը բաղկացած է տասնհինգ տարրերից. նրանցից հինգը գնացել են օրգանիզմի սնուցմանը: Որոշ մարդիկ, սակայն,

արտաշնչում են ոչ թե տասնհինգ, այլ միայն տասը տարր, այսինքն՝ նրանք հինգ տարր ավել են կլանում: Այս հինգ տարրերը բարձրագույն «ջրածիններն» են: Այս բարձրագույն «ջրածիններն» առկա են յուրաքանչյուր փոքրագույն մասնիկում, որ մենք ներշնչում ենք: Ներշնչելով օդը՝ մենք մեր մեջ ենք ներմուծում այս բարձրագույն «ջրածինները», սակայն եթե մեր օրգանիզմը չգիտի, թե ինչպես դրանք անջատել և տարանջատել դրանք օդի մյուս մասնիկներից, ապա դրանք կրկին օդ են արտանետում:

Եթե օրգանիզմը կարողանում է տարանջատել և պահել դրանք, ապա դրանք մնում են: Այսպիսով, մենք բոլորս էլ շնչում ենք միևնույն օդը, բայց դրանից առանձնացնում տարբեր նյութեր: Ոմանք ավելի շատ են առանձնացնում, ոմանք՝ ավելի քիչ:

Ավելի շատ մասնիկներ առանձնացնելու համար օրգանիզմում անհրաժեշտ է ունենալ որոշակի քանակությամբ համապատասխան նյութեր: Ապա օրգանիզմում առկա նուրբ նյութերը *մազնիսական* ազդեցություն են ունենում ներշնչված օդի նուրբ նյութերի վրա: Այսկերպ մենք կրկին անդրադառնում ենք հին ալքիմիական օրենքին. «Ոսկի սարքելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ որոշակի քանակությամբ իսկական ոսկի»: Եթե որևէ քանակությամբ ոսկի չկա, ապա միջոց էլ չի լինի այն ստեղծելու համար:

Այս ողջ ալքիմիան պարզապես մարդկային գործարանի և դրա աշխատանքի փոխաբերական նկարագրություն է, որտեղ ոչ ազնիվ մետաղները (կոպիտ նյութերը) վերածվում են արժեքավոր մետաղների (նուրբ նյութերի):

Մենք հետևեցինք երկու օկտավաների զարգացմանը: Երրորդ օկտավան՝ տպավորությունների օկտավան, սկսում է գիտակից ջանքերից: «Դ» 48-ը անցնում է «ռ» 24-ի, «ռ» 24-ը անցնում է «մի» 12-ի: Այս փուլում օկտավայի զարգացումը ընդհատվում է: (Տես պատկեր 38)

դո ռե մի
48 24 12

Տպավորությունների օկտավայի զարգացումը՝
առաջին *գիտակից* «ցնցումից» հետո:
Պատկեր 38

Այժմ, եթե ուսումնասիրենք այս երեք օկտավաների զարգացման արդյունքները, ապա կտեսնենք, որ առաջին օկտավան հասել է «սի» 12-ին երկրորդը՝ «յա» 6-ին և երրորդը՝ «մի» 12-ին: Այսպիսով, առաջին և երրորդ օկտավաները կանգ են առնում այն նոտաների վրա, որոնք չեն կարողանում անցնել հաջորդ նոտաներին:

դո մի սոլ յա ռե ֆա յա ռե ֆա դո մի ռե մի սոլ սի դո
48 48 48 6 24 24 24 96 96 192 192 384 12 12 12 768

Օրգանիզմի ինտենսիվ աշխատանքի, ինչպես նաև սննդարար նյութից ստացվող նյութերի ինտենսիվ արտադրության ամբողջական պատկերը առաջին *գիտակից* «ցնցումից» հետո:
Պատկեր 39

Որպեսզի երկու օկտավաները ունենան հետագա զարգացում, որոշակի ժամանակահատվածում մեքենան կունենա երկրորդ *գիտակից* ցնցման կարիքը, մի նոր գիտակից ջանք, որը հնարավորություն կտա երկու օկտավաներին շարունակելու իրենց զարգացումը: Այս ջանքի բնույթը պահանջում է հատուկ ուսումնասիրություն: Մեքենայի սովորական աշխատանքի տեսանկյունից կարելի է ասել, որ ընդհանրապես այս ջանքը

կապված է զգացմունքային աշխարհի հետ, որ դա յուրահատուկ ազդեցություն է մարդու զգացմունքների վրա: Սակայն, թե նման ազդեցությունն իրականում իրենից ինչ է ներկայացնում և ինչպես է պետք այն առաջացնել, կարելի է բացատրել միմիայն մարդ-մեքենայի գործարանի աշխատանքի ընդհանուր բնութագրման միջոցով:

Խուսափելով բացասական զգացմունքներից, «նույնացումից», «ներքուստ հաշվի նստելուց» մարդը նախապատրաստում է *երկրորդ ջանքը*:

Եթե մենք այժմ վերցնենք մարդկային գործարանի աշխատանքը որպես մեկ ամբողջություն, ապա կկարողանանք տեսնել, թե նուրբ նյութերի արտադրման ընդհատման ժամանակ ինչպես կարելի է խթանել գործարանի արտադրողականությունը: Կտեսնենք, որ սովորական պայմաններում, աշխատելով մեկ մեխանիկական «ցնցման» միջոցով, գործարանը արտադրում է նուրբ նյութերի շատ փոքր քանակություն, իրականում՝ ընդամենը «սի» 12: Աշխատելով մեկ մեխանիկական և մեկ գիտակից «ցնցման» շնորհիվ՝ գործարանը առավել մեծ քանակությամբ նուրբ նյութեր է արտադրում: Երկու գիտակից «ցնցումներով» աշխատանքի դեպքում գործարանն այնպիսի նուրբ նյութեր կարտադրի, որ ժամանակի ընթացքում ամբողջովին կփոխի նաև գործարանի բնույթը:

Եռահարկ գործարանը տիեզերքի մանրանկարն է և կառուցված է միևնույն օրենքների հիման վրա և տիեզերքի պես միևնույն հարթության վրա:

Մարդու, մարդկային օրգանիզմի և տիեզերքի միջև նմանությունը հասկանալու համար, եկեք դիտարկենք աշխարհն այնպես, ինչպես արել ենք նախկինում՝ երեք օկտավաների ձևով, սկսած Բացարձակից մինչև Արեգակ, Արեգակից՝ Երկիր մոլորակ և Երկիր մոլորակից մինչև Լուսին: Այս օկտավաներից յուրաքանչյուրում «Ֆայի» և «մի» միջև բացակայում է կիսատոնը, և յուրաքանչյուր օկտավայում այս բացակայող կիսատոնը լրացվում է որոշակի «ցնցման» միջոցով, որը տվյալ պահին արհեստականորեն է ստեղծվում: Եթե մենք այժմ նմանություն փնտրենք եռահարկ գործարանի և տիեզերքի երեք օկտավաների միջև, ապա կգիտակցենք, որ տիեզերքի երեք օկտավաների երեք լրացուցիչ «ցնցումները» համապատասխանում են մարդու օրգանիզմի ներթափանցող երեք տեսակի սննդին: Ստորին օկտավայի «ցնցումը» համապատասխանում է ֆիզիկական սննդին: Այս «ցնցումը» տիեզերական եռահարկ գործարանի «դո» 768-ն է: «Ցնցումը» միջին օկտավայում համապատասխանում է օդին: Այն տիեզերական գործարանի «դո» 192-ն է: Վերին օկտավայի «ցնցումը» համապատասխանում է տպավորություններին. այն տիեզերական գործարանի «դո» 48-ն է: Այս եռահարկ տիեզերական գործարանի ներքին աշխատանքում բոլոր երեք տեսակի սնունդները ենթարկվում է այնպիսի տրասֆորմացիայի, ինչպիսին մարդկային գործարանում՝ միևնույն հարթության վրա և համաձայն նույն օրենքների: Մարդու և տիեզերքի միջև եղած նմանության հետագա ուսումնասիրությունները հնարավոր են միայն մարդ-մեքենայի ուսումնասիրության դեպքում և մեր օրգանիզմում յուրաքանչյուր «ջրածնի» «տեղը» հստակորեն սահմանելուց հետո: Սա նշանակում է, որ ցանկացած հետագա ուսումնասիրությունների համար անհրաժեշտ է գտնել յուրաքանչյուր «ջրածնի» ստույգ նպատակը, այն է՝ յուրաքանչյուր «ջրածին» պետք է ստանա քիմիական, հոգեբանական, ֆիզիոլոգիական և անատոմիական սահմանում. այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է սահմանել դրա գործառույթները, մարդկային օրգանիզմում դրա գրաված տեղը և հնարավորության դեպքում՝ դրա հետ կապված տարօրինակ զգացողությունները:

Մարդու օրգանիզմի աշխատանքի ուսումնասիրությունը որպես քիմիական գործարան ցույց է տալիս մարդ-մեքենայի էվոլյուցիայի երեք փուլերը:

Առաջին փուլը վերաբերում է մարդու օրգանիզմի աշխատանքին այնպես, ինչպես բնությունն է ստեղծել այն, այսինքն՝ այն վերաբերում է մարդ համար մեկի, երկուսի և երեքի կյանքին և ֆունկցիաներին: Առաջին օկտավան, այսինքն՝ սննդի օկտավան, նորմալ զարգացում է ապրում մինչև «մի» 192: Այս պահին այն երկրորդ օկտավայի սկզբում ինքնաբերաբար «ցնցում» է ստանում և դրա զարգացումն հաջորդական ձևով ընթանում է դեպի «սի» 12: Երկրորդ օկտավան՝ օդի օկտավան, սկսում է «դո» 192-ից և զարգանում է մինչև «մի» 48, որտեղ և կանգ է առնում: Երրորդ օկտավան, այն է՝ տպավորությունների օկտավան, սկսվում է «դո» 48-ից և կանգ է առնում այստեղ: Առաջին օկտավայի յոթ նոտաները, երկրորդ օկտավայի երեք նոտաները և երրորդ օկտավայի մեկ նոտան տալիս են «մարդկային գործարանի» աշխատանքի ամբողջական պատկերը իր առաջին կամ բնական փուլում: Բնությունը մենակ մեկ «ցնցում» է ապահովել, այսինքն՝ երկրորդ օկտավա մուտք գործելու ժամանակ ստացված «ցնցումը», որը օգնում է առաջին օկտավայի «միին» անցնել «ֆային»: Սակայն բնությունը չի նախատեսել և ապահովել երկրորդ «ցնցումը», այն «ցնցումը», որ կօգնե զարգացնելու երրորդ օկտավան՝ հնարավորություն տալով երկրորդ օկտավայի «միին» անցնում կատարել «ֆայի»: Մարդն այս «ցնցումը» պետք է իր սեփական ջանքերով ստեղծի, եթե ցանկանում է նուրբ «ջրածինների» քանակը իր օրգանիզմում մեծացնել:

Երկրորդ փուլը վերաբերում է մարդու օրգանիզմի այն աշխատանքին, որի ժամանակ մարդը կետ «դո» 48-ում ստեղծում է գիտակից կամային «ցնցում»:

Առաջին հերթին այս կամային «ցնցումը» փոխանցվում է երկրորդ օկտավա, որը զարգանում է միայն մինչև «սոլ» 12 կամ նույնիսկ ավելի բարձր մինչև «յա» 6 և այլն, այն դեպքում, եթե օրգանիզմի աշխատանքը բավականին ինտենսիվ է: Մինևույն «ցնցումը» նաև երրորդ տպավորությունների օկտավային զարգացման հնրավորություն է տալիս, որը այս դեպքում հասնում է մինչև «մի» 12: Այսպիսով, աշխատանքի երկրորդ փուլում, մենք տեսնում ենք երկրորդ օկտավայի ամբողջական զարգացում և երրորդ օկտավայի երեք նոտաներ: Առաջին օկտավան կանգ է առնում «սի» 12 նոտայի, իսկ երրորդ օկտավան՝ «մի» 12 նոտայի վրա: Այս օկտավաներից որևէ մեկը չի կարող առաջ ընթանալ առանց թարմ «ցնցման»: Երկրորդ «ցնցման» բնույթը այդքան էլ հեշտ չէ նկարագրել, ինչպես դա արվում է առաջին կամային «ցնցման» «դո» 48-ի դեպքում: Այս «ցնցման» բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ «սի» 12 -ի և «մի» 12-ի նշանակությունը:

Այն գործադրած ջանքը, որ ստեղծում է այս «ցնցումը» պետք է բաղկացած լինի զգացմունքների վրա տարված աշխատանքից և զգացմունքների փոխարկումից: Զգացմունքների փոխարկումը այնուհետև կօգնի մարդու օրգանիզմում «սի» 12-ի փոխարկմանը: Որևէ լուրջ աճ, այն է՝ բարձրագույն մարմինների որևէ աճ հնարավոր չէ առանց այս փոխարկման:

Փոխարկման այս գաղափարը հայտնի էր մի շարք հնադարյան ուսմունքներին, ինչպես նաև համեմատաբար նորերին, օրինակ՝ Միջնադարի ավքիմիային: Սակայն ավքիմիկոսները այս փոխարկման մասին փոխաբերական իմաստով էին խոսում՝ ոչ ազնիվ մետաղների փոխակերպումից արժեքավորների: Իրականում, սակայն, նրանք նկատի ունեին մարդու օրգանիզմում կոշտ «ջրածինների» փոխակերպումը նուրբ «ջրածինների», գլխավորապես «մի» 12-ի փոխակերպումը: Եթե իրականացվի այս փոխակերպումը, ապա կարելի է ասել, որ մարդը ձեռք կբերի այն, ինչին ձգտում էր. կարելի է նաև ասել, որ մինչև այս տրանսֆորմացիան տեղի չունենա, մարդու կողմից ձեռք բերված բոլոր արդյունքները կարող են կորչել, քանի որ դրանք բոլոր դեպքերում մարդու մոտ հաստատուն չեն: Դեռ ավելին՝ դրանք ձեռք են բերվում միայն մտքի և

զգացմունքի բնագավառում: Իրական, օբյեկտիվ արդյունքներ կարելի է ձեռք բերել «մի» 12-ի փոխակերպումից հետո:

Այն ալքիմիկոսները, որ խոսում էին այս փոխակերպումից հենց դրանից են անմիջապես սկսել: Նրանք ոչինչ չգիտեին կամ համենայն դեպս ոչինչ չէին նշում առաջին կամային «ցնցման» մասին: Սակայն հենց այս ամենից է ամեն ինչ կախված: Երկրորդ կամային «ցնցումը» և փոխակերպումը ֆիզիկապես հնարավոր կդառնան միայն այն դեպքում, եթե առաջին կամային «ցնցման» վրա երկարատև աշխատանք տարվի, ինչը կայանում է սեփական անձը հիշելու և ստացված տպավորությունները ուսումնասիրելու մեջ: Վանականի և ֆաբիրի ճանապարհին աշխատանքը երկրորդ «ցնցման» ուղղությամբ սկսվում է մինչև առաջին «ցնցումը», սակայն քանի որ «մի» 12-ը ստեղծվում է միայն առաջին «ցնցման» արդյունքում, ապա մյուս նյութի բացակայության դեպքում աշխատանքը անհրաժեշտության պատճառով պետք է կենտրոնացվի «սի» 12-ի վրա, և շատ հաճախ դա բերում է սխալ արդյունքների: Չորրորդ ուղու միջոցով ճիշտ զարգացումը պետք է սկսվի առաջին կամային «ցնցումից», իսկ այնուհետև «մի» 12-ից անցնի երկրորդ «ցնցմանը»:

Մարդու օրգանիզմի աշխատանքի երրորդ փուլը սկսվում է այն ժամանակ, երբ «մի» 12 կետում մարդն իր ներսում ստեղծում է երկրորդ կամային «ցնցում», այն ժամանակ, երբ նրանում տեղի է ունենում այս «ջրածինների» փոխակերպումը բարձրագույն «ջրածինների»: Երկրորդ փուլը և երրորդ փուլի սկիզբը վերաբերում են մարդ համար չորսի կյանքին և ֆունկցիաներին: Փոխակերպման և բյուրեղացման համար բավականի երկար ժամանակ է անհրաժեշտ որպեսզի մարդ համար չորսը հասնի մարդ համար հինգի մակարդակին:

«Ջրածինների աղյուսակի» բավարար ընկալման դեպքում մարդկային մեքենայի աշխատանքում ի հայտ են գալիս մի շարք նոր հատկություններ, ամենից առաջ՝ սահմանվում են կենտրոնների և նրանց համապատասխան ֆունկցիաների միջև եղած տարբերությունները:

Մարդկային մեքենայի կենտրոնները աշխատում են տարբեր «ջրածինների» օգնությամբ: Սա է նրանց հիմնական տարբերությունը: Ավելի կոշտ, ծանր, խիտ «ջրածնով» հագեցված կենտրոնը ավելի դանդաղ է աշխատում: Ավելի թեթև, ճկուն «ջրածինը», ավելի արագ է աշխատում: Մտավոր կամ ինտելեկտուալ կենտրոնը մինչ այժմ մեր կողմից ուսումնասիրված բոլոր երեք կենտրոններից ամենադանդաղն է: Այն գործում է «ջրածին» 48-ի միջոցով («ջրածինների աղյուսակի» երրորդ սանդղակի):

Շարժող կենտրոնը աշխատում է «ջրածին» 24-ով: «Ջրածին» 24-ը ավելի արագաշարժ է և ճկուն, քան «ջրածին» 48-ը: Ինտելեկտուալ կենտրոնը երբևիցե չի կարող հետևել շարժիչ կենտրոնի աշխատանքին: Մենք չենք կարող հետևել ոչ մեր շարժումներին, ոչ էլ այլ մարդկանց շարժումներին, մինչև նրանք արհեստականորեն չդանդաղեցվեն: Առավել փոքր է մեր շարժիչ կենտրոնի մի մասը կազմող օրգանիզմի ներքին, բնագոյային ֆունկցիաներին, բնագոյային ինտելեկտի աշխատանքին հետևելու հնարավորությունը:

Էմոցիոնալ կենտրոնը կարող է գործել «ջրածին» 12-ով: Իրականում սակայն այն շատ հազվադեպ է գործում այս նուրբ «ջրածնով»: Շատ դեպքերում վերջինիս աշխատանքը շարժիչ կենտրոնից կամ բնագոյային կենտրոնից տարբերվում է իր ինտենսիվությամբ և արագությամբ:

Մարդկային մեքենայի և դրա աշխատանքի հնարավորությունները հասկանալու համար, պետք է իմանալ, որ այս երեք կենտրոններից բացի, մենք ունենք ևս երկու

լիովին զարգացած և ճիշտ գործող կենտրոններ, սակայն դրանք կապված չեն մեր առօրյա կյանքի հետ, ոչ էլ այն երեք կենտրոնների հետ, որոնց մասին մենք ինքներս տեղյակ ենք:

Այս բարձրագույն կենտրոնների գոյությունը ավելի մեծ հանելուկ է, քան այն թաքցված գանձերը, որոնց անհիշելի ժամանակներից փնտրել են առեղծվածների և հրաշալիքների գոյությանը հավատացող մարդիկ:

Բոլոր միաստիկ և օկուլտ համակարգերը ընդունում են մարդու գերբնական ուժերի և կարողությունների գոյությունը, չնայած շատ դեպքերում նրանք այս ուժերի և կարողությունների գոյությունը ներկայացնում են հնարավորությունների տեսքով և խոսում են մարդու մեջ թաքնված ուժերի զարգացումից: Ներկայիս ուսմունքը մյուսներից տարբերվում է այն փաստով, որ այն հաստատում է մարդու մոտ բարձրագույն կենտրոնների առկայությունը և դրանց լիարժեք զարգացվածությունը:

Ստորին կենտրոններն են, որ զարգացած չեն: Եվ հենց այս ստորին կենտրոնների զարգացման բացակայության կամ ոչ ամբողջական գործունեության պատճառով է, որ մենք չենք կարողանում օգտագործել բարձրագույն կենտրոնները:

Ինչպես արդեն նշեցի, գոյություն ունեն երկու բարձրագույն կենտրոններ:

Բարձրագույն զգացմունքային կենտրոնը, որ աշխատում է «ջրածին» 12-ով և բարձրագույն մտավոր կենտրոն, որ աշխատում է «ջրածին» 6-ով:

Եթե մենք դիտարկենք մարդ-մեքենայի աշխատանքը կենտրոնները աշխատացնող «ջրածինների» տեսանկյունից, ապա կտեսնենք, թե ինչու չենք կարողանում միացնել բարձրագույն կենտրոնները ստորին կենտրոններին:

Ինտելեկտուալ կենտրոնը գործում է «ջրածին» 48-ով, շարժիչ կենտրոնը՝ «ջրածին» 24-ով:

Եթե զգացմունքային կենտրոնը աշխատեր «ջրածին» 12-ով, դրա աշխատանքը կկապվեր բարձրագույն զգացմունքային կենտրոնի հետ: Երբ զգացմունքային կենտրոնի աշխատանքը հասնում է «ջրածին» 12-ի ինտենսիվությանը և արագությանը, ապա ժամանակավոր կապ է ստեղծվում բարձրագույն զգացմունքային կենտրոնի հետ, որի հետևանքով մարդը նոր զգացմունքներ է ունենում և նոր տպավորություններ է ստանում՝ մինչ այժմ նրան բացարձակապես անհայտ, որոնց նկարագրության համար նա ոչ կարող է խոսքեր գտնել, ոչ արտահայտվել: Սակայն սովորական պայմաններում մեր սովորական զգացմունքների և բարձրագույն զգացմունքային կենտրոնների միջև եղած տարբերությունը այնքան մեծ է, որ որևէ կապ չի ստեղծվում. մենք մեր ներսում չենք լսում այն ձայները, որոնք խոսում են մեզ հետ և *ձայն տալիս* բարձրագույն զգացմունքային կենտրոնից:

Բարձրագույն մտավոր կենտրոնը, աշխատելով «ջրածին» 6-ով, առավել հեռու է մեզնից և պակաս անհասանելի: Դրա հետ կապը հնարավոր է միայն բարձրագույն զգացմունքային կենտրոնի շնորհիվ: Նման կապի մասին մենք միայն իմանում ենք միաստիկ պատահարներից, զմայլված վիճակներից և այլն: Այս վիճակների հիմք կարող են հանդիսանալ կրոնական զգացմունքները կամ, շատ կարճ պահով, որոշակի թմրադեղերը կամ որոշ պաթոլոգիկ վիճակները, ինչպիսիք են էփիլեպսիայի բռնկումները, ուղեղին հասցված տրավմատիկ վնասվածքները, որոնց դեպքերում դժվար է ասել, թե որոնք են պատճառները, իսկ որոնք՝ հետևանքները, այսինքն՝ արդյոք պաթոլոգիական վիճակը տվյալ կապի արդյունքն է, թե դրա պատճառը:

Եթե կարողանայինք միտումնավոր և կամային կերպով կապել մեր սովորական գիտակցության կենտրոնները բարձրագույն կենտրոնների հետ, այն մեզ որևէ կերպ չէր օգնի մեր ներկայիս համընդհանուր վիճակում: Շատ հաճախ, երբ պատահաբար կապ է ստեղծվում բարձրագույն մտավոր կենտրոնի հետ, մարդը կորցնում է իր

գիտակցությունը: Ուղեղը հրաժարվում է ընդունել մտքերի, զգացմունքերի, պատկերների և գաղափարների հորդացող տարափը: Եվ պայծառ մտքի կամ զգացմունքի փոխարեն, մարդն ընկնում է լիակատար դատարկության մեջ՝ կորցնելով գիտակցությունը: Հիշողության մեջ մնում է միայն առաջին պահը, երբ հեղեղը տոգորում է մեր միտքը և վերջին պահը, երբ հեղեղը նահանջում է և գիտակցությունը վերադառնում է: Բայց նույնիսկ այդ պահերը ունեն այնքան անսովոր երանգներ և գույներ, որ կյանքի առօրյա զգացմունքներում չկա որևէ մի բան, որի հետ կարելի լիներ համեմատել դրանք: Եվ սա այն ամենն է, ինչ մնում է այսպես կոչված «միստիկ» և «էքստազային» փորձից, որոնք ժամանակավոր կապն են բարձրագույն կենտրոնների հետ: Սակայն շատ հազվադեպ է պատահում, երբ ավելի լավ նախապատրաստված ուղեղին հաջողվում է կլանել և հիշել էքստազի պահին զգացածը և ըմբռնածը: Սակայն նույնիսկ այս դեպքերում մտավոր, շարժիչ և զգայական կենտրոնները ուրույն ձևով են հիշում և փոխանցում ամեն ինչ՝ բացարձակապես նոր և նախկին երբևիցե չզգացած զգացողությունները վերածելով առօրյա սովորական զգաողությունների և աշխարհիկ եռաչափ ձևերի, որոնք իրականում կտրում անցնում են աշխարհիկ չափումների սահմանները: Այս կերպ, իհարկե, նրանք ամբողջովին խեղաթյուրում են այս անսովոր փորձից մնացած ամեն մի հետք: Մեր սովորական կենտրոնների կողմից բարձրագույն կենտրոններից ստացված տպավորությունների մեկնաբանությունը կարելի է համեմատել կույր մարդու հետ, որ խոսում է գույներից կամ խուլ մարդու հետ, որ խոսում է երաժշտությունից:

Ստորին և բարձրագույն կենտրոնների միջև ճշգրիտ և կայուն կապ հաստատելու համար անհրաժեշտ է կարգավորել և արագացնել ստորին կենտրոնների աշխատանքը:

Դեռ ավելին՝ ինչպես արդեն ասվել է, ստորին կենտրոնները սխալ են գործում, քանի որ շատ հաճախ իրենց վերագրված ֆունկցիայի փոխարեն, նրանցից այս կամ այն կենտրոնը իր վրա է վերցնում մյուսի աշխատանքը:

Սա բավականին կրճատում է մեքենայի ընդհանուր աշխատանքի արագությունը՝ բարդացնելով կենտրոնների աշխատանքի արագացումը: Այսպիսով՝ ստորին կենտրոնների աշխատանքը արագացնելու և կարգավորելու համար առաջնային նպատակն է յուրաքանչյուր կենտրոնն ազատելը իր համար օտար և անսովոր աշխատանքից՝ վերադարձնելով նրան իր սեփական աշխատանքը, ինչը նա կարող է կատարել ավելի լավ քան ցանկացած այլ կենտրոն:

Շատ էներգիա է վատնվում նաև ցանկացած տեսանկյունից անպետքակա՜ն և վնասակար աշխատանքի վրա, ինչպես օրինակ տհաճ զգացումների արտահայտման, անհանգստության, մտահոգության, շտապողականության և մի շարք ավտոմատ գործողությունների վրա, որոնք լիովին անօգուտ են: Նման ավելորդ գործողության բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Առաջին հերթին՝ մեր ուղեղում մտքերի մշտական շարժվող հոսք կա, որը մենք ոչ կարող ենք կանգնեցնել, ոչ էլ վերահսկել. այն մեզնից խլում է հսկայական էներգիա: Երկրորդը՝ մեր օրգանիզմում *մկանները* ավելորդ մշտական լարվածության մեջ են: Մկանները լարված են նույնիսկ այն ժամանակ, երբ մենք ոչինչ չենք անում: Հենց որ մենք սկսում ենք փոքր և աննշան ինչ-որ աշխատանք կատարել, գործի է դրվում մկանների մի ամբողջ համակարգ, որն իրականում պահանջվում է ամենադժվարին և ամենաձանր աշխատանքի համար: Մենք գետնից ասեղ ենք բարձրացնում և այս գործողության վրա այնքան էներգիա էինք ծախսում, որքան անհրաժեշտ է մեր ծանրության մարդուն բարձրացնելու համար: Մենք մի կարճ նամակ ենք գրում և այնքան մկանային էներգիա ենք օգտագործում դրա վրա, որ կարելի էր օգտագործել մեծածավալ հատոր գրելու համար: Սակայն գլխավոր միտքս այն է, որ մենք շարունակաբար և անընդհատ օգտագործում ենք մկանային էներգիա նույնիսկ այն

Ժամանակ, երբ ոչինչ չենք անում: Երբ մենք քայլում ենք, մեր ուսերի և ձեռքերի մկանները անհարկի լարվում են: Երբ մենք նստում ենք, մեր ոտքերի, վզի, մեջքի և ստամոքսի մկանների անհարկի լարվում են: Մենք նույնիսկ քնի ժամանակ լարում ենք մեր ձեռքերի, ոտքերի, դեմքի, մեր ողջ մարմնի մկանները, և չենք գիտակցում, թե որքան էներգիա ենք ծախսում աշխատելուն ուղղված այս շարունակական պատրաստականության ժամանակ, ինչը մենք մեր կյանքի ընթացքում երբևիցե իրական և օգտակար աշխատանքի համար չեինք անի:

Այնուհետև, կարելի է մատնանշել մեր անդադար խոսելու սովորությունը ցանկացած մարդու հետ, ցանկացած թեմայի շուրջ, իսկ եթե նույնիսկ որևէ մեկը չկա, ապա ինքներս մեզ հետ խոսելու սովորությունը: Երևակայության մեջ ընկղմվելու, անըջելու սովորությունը, տրամադրության, զգացմունքների և էմոցիաների մշտական փոփոխությունը, ինչպես նաև անիմաստ բաների մի որոշ քանակություն, որ մարդը պարտավորված է համարում զգալ, մտածել, անել կամ ասել:

Երեք կենտրոնների աշխատանքը կարգավորելու և հավասարակշռելու համար, որոնց ֆունկցիաները մեր կյանքի բաղկացուցիչ մասն են կազմում, անհրաժեշտ է սովորել խնայել մեր օրգանիզմի կողմից արտադրվող էներգիան, չծախսել այն անհարկի ֆունկցիաների վրա՝ խնայելով այն այնպիսի գործունեության համար, որը աստիճանաբար կմիացնի այն բարձրագույն կենտրոնների հետ:

Այն ամենն, ինչ արդեն ասվել է նախկինում սեփական անձի վրա աշխատելու մասին, ներքին միասնության ձևավորման և մարդ համար մեկ, երկուս, երեք մակարդակից մարդ համար չորս և մյուս մակարդակներին հասնելու վերաբերյալ, միևնույն նպատակն է հետապնդում: Այն, ինչ համաձայն մի տերմինաբանության կոչվում է «աստեղային մարմին», մյուս տերմինաբանության համաձայն՝ կոչվում է «բարձրագույն զգացմունքային կենտրոն», չնայած՝ տարբերությունն այստեղ միայն տերմինաբանության մեջ չէ: Սրանք մարդու էվոլյուցիայի հաջորդ փուլի տարբեր ասպեկտներն են: Կարելի է ասել, որ «աստեղային մարմինը» անհրաժեշտ է «բարձրագույն զգացմունքային կենտրոնի» և ստորին կենտրոնի համատեղ ամբողջական և ճշգրիտ աշխատանքի համար: Կամ կարելի է ասել, որ «բարձրագույն զգացմունքային կենտրոնը» անհրաժեշտ է «աստեղային մարմնի» աշխատանքի համար:

«Մտավոր մարմինը» համապատասխանում է «բարձրագույն մտավոր կենտրոնին»: Միայն կլինեք ասել, թե դրանք միևնույն բանն են: Սակայն մեկը ունի մյուսի կարիքը, մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի, մեկը մյուսի որոշ կողմերի և ֆունկցիաների արտահայտությունն է:

Չորրորդ մարմինը պահանջում է բոլոր կենտրոնների ամբողջական և համահունչ աշխատանք: Ենթադրվում է, որ այն ամբողջովին վերահսկում է այս աշխատանքը կամ դրա արտահայտությունն է:

«Ջրածինների աղյուսակի» օգնությամբ անհրաժեշտ է հասկանալ այն գաղափարը, որ բոլոր հոգեկան, մտավոր, զգացմունքային, կամայական և այլ ներքին գործընթացները, այդ թվում վեհ բանաստեղծական ներշնչանքները, կրոնական գմայլանքները և միաստիկ բացահայտումները ամբողջովին նյութական են:

Գործընթացների նյութականությունը նշանակում է, որ վերջիններս կախված են դրանց վրա օգտագործվող նյութից կամ սուբստանցիայից: Մի գործընթաց կարող է պահանջել ջրածին 48-ի օգտագործում, այսինքն այրում. նրան անհրաժեշտ է ավելի նուրբ, ավելի դյուրավառ նյութ՝ ջրածին 24: Երրորդ գործընթացի համար ջրածին 24-ը շատ թույլ է, այն պահանջում է ջրածին 12:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մեր օրգանիզմը տարբեր կենտրոնների համար ունի տարբեր տեսակի անհրաժեշտ վառելիքներ: Կենտրոնները կարելի է համեմատել

մեքենաների, որոնց աշխատանքի համար անհրաժեշտ են տարբեր որակի վառելիքներ: Մեկը կարող է աշխատել նավթի մագուրով, մյուսը՝ նավթի հումքով: Երրորդի համար անհրաժեշտ է կերոսինը, մյուսը կերոսինով չի աշխատում, փոխարենը նրան անհրաժեշտ կլինի բենզին: Մեր օրգանիզմի նուրբ նյութերը կարելի է բնորոշել՝ որպես բոցավառման տարբեր կետեր պարունակող նյութեր, մինչդեռ ինքը օրգանիզմը կարելի է համեմատել մի լաբորատորիայի հետ, որտեղ կենտրոններին անհրաժեշտ են տարբեր հումքերից պատրաստված տարբեր ուժգնության վառելանյութեր: Դժբախտաբար լաբորատորիայի հետ ինչ-որ բան այն չէ: Վերահսկող ուժերը, որ տեղաբաշխում են վառելիքները տարբեր կենտրոններին, շատ հաճախ սխալներ են գործում, և կենտրոնները ստանում են վառելիք, որ կամ շատ թույլ են իրենց համար կամ շատ հեշտությամբ բռնկվող: Դեռ ավելին՝ բոլոր արտադրվող վառելիքների մեծ մասը ապարդյուն է ծախսվում. այն պարզապես վերջանում է, կորչում: Բացի այդ, շատ հաճախ պայթյուններ են տեղի ունենում լաբորատորիայում, որոնք մի հարվածից ոչնչացնում են հաջորդ օրվա կամ ավելի երկար ժամանակահատվածի համար նախապատրաստված վառելիքը՝ այսպիսով անվերականգնելի վնաս պատճառելով ամբողջ գործարանին:

Պետք է հաշվի առնել, որ օրգանիզմը մեկ օրվա ընթացքում սովորաբար արտադրում է բոլոր այն նյութերը, որ անհրաժեշտ են հաջորդ օրվա համար: Եվ շատ հաճախ բոլոր այս նյութերը ծախսվում կամ սպառվում են ավելորդ և, որպես կանոն, բացասական զգացմունքների վրա: Վատ տրամադրությունը, անհանգստությունը, տհաճ ակնկալիքները, կասկածները, վախը, վնաս կրելու զգացումը, գայրույթը, այս զգացումներից յուրաքանչյուրը որոշակի մակարդակի ինտենսիվության հասնելով՝ կարող է կես ժամում կամ նույնիսկ կես րոպեում սպառել բոլոր այն նյութերը, որ պատրաստվել էին հաջորդ օրվա համար: Իսկ բարկության մեկ բռնկումը կամ մեկ այլ բռնի զգացմունքի դրսևորումը կարող է միանգամից պոռթկման ենթարկել լաբորատորիայում պատրաստված բոլոր նյութերը՝ երկար ժամանակ կամ նույնիսկ ընդմիջտ թողնելով մարդուն ներքուստ դատարկ:

Բոլոր հոգեկան գործընթացները նյութական են: Չկա որևիցե ֆիզիկական գործընթաց, որը չպահանջի համապատասխան նյութի սպառում: Եթե առկա է տվյալ նյութը, գործընթացը շարունակվում է: Երբ այդ նյութը սպառվում է, գործընթացը կանգ է առնում: